

21.065

ՀԱՅՈ Պետական Մանկավարժական Խետֆունութի Հեռակա բառը

33

Ե. 81

ՄԵԹՈԴԱԿԱՆ ՑՈՒՑՈՒՄՆԵՐ ՀԵՌԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՈՒՍՏԱՂԱՆԵՐԻՆ

ՔԱՂԱՔԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ

ԿՈՆՏՐՈԼ ԱՅԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հեռակայողների կողմից կոնտրոլ աշխատանքներ զրելու գործին օգնելու, նրանց ուշադրությունը յուրաքանչյուր թեմայի հիմնական հարցերի վրա գարձնելու և աշխատանքների որակը բարձրացնելու նպատակով, Հեռակա Մանկավարժական ինստիտուտն ուղարկում է ստորև շարադրված մեթոդական ցուցումները: Միաժամանակ նշվում է, որ այդ ցուցումները չպիտի ծառային որպես ընդհանուր շաբաթն, որին հեռակայողը հետեւ միայն Յուրաքանչյուր հեռակայող կարող է իր համար աշխատանքի ինքնուրույն ծրագիր կազմել, որն այս կամ այն մոմենտներում կարող է առաջարրվող ուրոգական այս ցուցումների ծրագրից տարբերվել: Սակայն թեմայի բոլոր հիմնական հարցերը կոնտրոլ աշխատանքում պիտք է ստունան ծավալուն և ճիշտ լուսաբանում:

Նախ քան առաջին թեմաների մասին մեթոդական ցուցումներին անցնելն անհրաժեշտ ենք համարում հեռակայողների ուշադրությունը հրավիրել մի քանի տեխնիկական կանոնների վրա, որոնց պահպանումը կոնտրոլ աշխատանքների կատարման ժամանակ զգալիորեն կթեթևացնի աշխատանքների մեջենզիրան:

(19100-ահ)

2001

ԲԻBLIOTEKA  
Академії Нау

УРСР

Այդ կանոններն են՝

1. Գրել լինթեռնելի թանաքով;

2. Թողնել լուսանցքներ, որութեազի ուեցենգենտը կարողանա ձեր աշխատանքների լուսանցքում անհրաժեշտ դիտողություններ անել:

3. Աշխատանքի մեջ քննվող հարցերը բաժանել համապատասխան մասերին:

4. Ցույց տալ տվյալ թեմայի վրա աշխատելու ժամանակ օգտագործված գրականությունը:

### 1-ին թեմա.

#### Կապիտալիստական շահագործման հությունը

Այս թեմայի մասին գրավոր աշխատանքներում պետք է պարզել հավելյալ արժեքի թեորիայի նշանակությունը, որպես Մարքսի տնտեսագիտական ուսմունքի անկյունաքարը։ Պետք է դրսերել հավելյալ արժեքի աղբյուրը և նրա նշանակությունը, տալ կապիտալի ու նրա բարկացուցիչ մասերի անալիզը և քննադատության հնթարկել հավելյալ արժեքի վերաբերյալ հակամարքիստական տեսությունները։ Բացահայտելով վարձու աշխատանքի շահագործման վրա հիմնված արտադրության կապիտալիստական եղանակի էռությունը—անհրաժեշտ է ցույց տալ տնտեսության սովորությունները, որ ոչնչացրել է մարդու կողմից շահագործման բոլոր ձևերը։

Այս թեման չի սպառում հավելյալ արժեքի ամրող թեուրիան, որովհետև գժվար է մի աշխատանքում շարադրել նրան վերաբերող բոլոր հարցերը։ Մասնավորապես տվյալ թեմայի մեջ չի մանուամ բացարձակ և հարաբերական հավելյալ արժեքի հարցը և արդյունաբերության մեջ կապիտալիզմի զարգացման պատմական երեք հիմնական փուլերի բնութագիրը։

Էլնելով վերոհիշյալից, տվյալ թեմայի մասին աշխատանքում պետք է մացնել համեյալ հարցերը։

1. Շահագործման մինչ կապիտալիստական ձևերը.
2. Կապիտալիստական շահագործումը սրպես շահագործման պատմական առանձին ձև.
3. Հավելյալ արժեքի աղբյուրը.
4. Կապիտալը ու նրա բաղկացուցիչ ժամանակական պատմական առանձին ձև.
5. Կապիտալի ու հավելյալ արժեքի բուրդուական, ֆաշիստական և սոցիալ-դեմոկրատական տեսությունների քննադատությունը.
6. Հավելյալ արժեքի թեորիայի նշանակությունը Մարքսի տնտեսական ուսմունքում.
7. Մարդու մարդու կողմից շահագործելու լիկվիդացիան ՍՍԴՄ-ում։

#### 1. Նահագործման մինչ կապիտալիստական ձևերը

Այս հարցը հաջորդ հարցի համար պետք է հանդիսանալ որպես ներածություն և անհրաժեշտ է շարադրել չափ կարձանական է ցույց տալ, որ «կապիտալը չի ստեղծել հավելյալ աշխատանք» (Մարքս), որ մինչ կապիտալիզմը ևս գասակարգային հասարակարգերում շահագործումը գոյություն ուներ (ստրկատիրական և ֆեոդալական հասարակություններ), բայց շահագործման մինչ կապիտալիստական այդ ձևերն ունեն իրենց սովորակիկ առանձնահատկությունները, որոնք տարբերվում են կապիտալիստական շահագործման ձևերից։

Նահագործման մինչ կապիտալիստական ձևերի բնութագրման համար կարգալ հետեւյալ գրականությունը.

Փողովածու—«Մարքսն ու Էնգելսը անտիկայի մասին», էջ՝ 72—76.

Մարքս.—«Կապիտալ», Յ-րդ հատոր, 2-րդ մաս, գլուխ 47,

Զ-րդ, Յ-րդ և 4-րդ հոդվածները,

Էնգելս.—«Հնատանիքի մանավագ սեփականության և պետության ժագումը», գլ. 9-րդ,

Լենին.—«Դասախոսություն պետության մասին», հատ. 24.

» «Կապիտալիզմի զարգացումը Ռուսաստանում», հատ. Յ-րդ, գլուխ Յ-րդ, հատվ. 1-ին,



2. Կապիտալիստական շահագործմանը, որպես շահագործման պատմական առանձին ձեվ

Կապիտալիստական շահագործմանն ամենից առաջ պետք է մոտենալ պատմականորեն, որպես շահագործման առանձին ձեվ, որը տարբերվում է նրան նախորդող ձևերից ու երեսն է եկել զարգացման որոշ աստիճանում: Տվյալ հարցի խնդիրն է՝ պարզել վարձու աշխատանքի տարբերությունը ստրկական և ճորտական աշխատանքից և բնութագրել պատմական այն պայմանները, որոնց ժամանակ տեղի է ունենալ շահագործման փեոդական ձեվից կապիտալիստականի անցումը:

Այս հարցի վերաբերմամբ ուշադրությամբ կարդալ հետեւյալ գրականությունը:

Մարքս.—«Կապիտալ», առաջին հատոր, գլ. 4-րդ, 3-րդ հատվ., գլ. 13-րդ, 3—9 հատվածները.

» «Կապիտալ», 1-ին հատ., գլ. 24 (մասնավորապես պարզությամբ 2-ը).

» «Կապիտալ», 1-ին հատոր, գլուխ 17:

### 3. Հավելյալ արժեքի աղբյուր

Պարզելով, թե պատմականորեն ինչպես է առաջացել կապիտալիստական շահագործումը, պետք է անցնել թեմայի կենարոնական հարցին—հավելյալ արժեքի հարցին: Այս հարցը պարզելու համար պետք է կանգ առնել հետեւյալ հիմնական մոռմենտների վրա:

ա) Կապիտալի ընդհանրական ֆորմուլան, նրա նմանությունն ու տարբերությունը հասարակ ապրանքաշրջանառությունից.

բ) Կապիտալի ընդհանրական ֆորմուլայի հակասությունները.

գ) Աշխատուժի գնումն ու վաճառքը.

դ) Աշխատանքի պրոցեսն ու արժեքի մեծացման պրոցեսը:

Այս հարցի ուսումնառիթման հիմնական աղբյուրը հանդիսանում է՝

Մարքս.—«Կապիտալ», 1-ին հատոր, գլ. 4 և 5:

### 4. Կապիտալը եվ նրա բաղկացուցիչ մասերը

Վերլուծելով հավելյալ արժեքի և նրա աղբյուրի էությունը, պետք է անցնել կապիտալի վերլուծմանը: Այդ գեպքում անհրաժեշտ է ուշադրություն դարձնել հետեւյալ երկու մամենաների վրա:

ա) Պարզել կապիտալի ընդհանուր հասկացողությունը, կապիտալը որպես պատմական կատեգորիա և բարժուական հասկացության արտադրական հարաբերությունների արտահայտությունը:

բ) Տալ կապիտալի բազկացուցիչ մասերի՝ հաստատուն և փոփոխուն կապիտալի բացարությունը:

Առաջին հարցի առթիվ անհրաժեշտ է լուրջ ուշագրությամբ ուսումնասիրել Մարքսի «Վարձու աշխատանք և կապիտալ» աշխատությունը, իսկ երկրորդ հարցի մասին կարդալ Մարքսի «Կապիտալ»-ի 1-ին հատորի 6-րդ գլուխը:

### 5. Կապիտալի եվ նավելյալ արժեքի բուրժուական եվ սոցիալ-դեմոկրատական ենությունի բնականական առթյունը

Յուրժուական անտեսագետների կողմից տրված՝ կապիտալի ամենատարածված ու տիպիկ բնորոշումը (կապիտալի նույնացումը աշխատանքի կուտակման հետ, կամ արտադրամիջոցների հետ), Մարքսը ոչնչացնող քննադրառության է հնթարկում իր «Վարձու աշխատանք և կապիտալ» աշխատության մեջ: Այս հարցի շարադրման ժամանակ պետք է առանձին ուշադրություն դարձնել թե ինչպես բուրժուական տնտեսագետական աշխատանքի վեհական աշխատանքի մեջ:

Ները կապիտալը բնուռառում են, որպես հավիտենական, ու ոչ պատմական կատեգորիա և զբուրքել այդ բնորոշման բուրք ժուական ապօրոգետիկ խմաստը Անհրաժեշտ է նաև ցույց տալ, որ սոցիալ-դեմոկրատական թեորիակիները դավաճանելով մարքսիզմին գնում են բուրժուական անտեսագետների հետեւ և կրկնում կապիտալի նրանց բնորոշումը:

Այնուհետև պիտք է անցնել հավելյալ արժեքի աղբյուրի բուրժուական թեորիաների քննադատությանը: Բնդսմին առանձնակի քննադատության պիտք է ենթարկել վուլգար տընտեսագետներին (ժան Բատիստ Սեբ՝ կապիտալի արտադրողականության թեորիան, Սենիորի՝ ժուժկալության թեորիան և «վերջին ժամ» թեորիան), ցույց տալով նրանց ամբողջովին ոչ գիտական լինելն ու բուրժուական ապօրոգետիկ էությունը: Պիտք է ցույց տալ նաև, որ սոցիալ-դեմոկրատական թեորիաները ունվիրիայի են ենթարկում Մարքսի հավելյալ արժեքի ուսմունքը ու միալցվում են բուրժուական ապօրոգետների հետ:

Վուլգար տնտեսագետների թեորիաների քննադատությունը Մարքսը տալիս է մի շարք տեղերում: Մասնակրապեպետք է նշել «Կապիտալ»-ի հետեւյալ գլուխները—Յոթ հատ, Զ-րդ մաս, գլ. 48 (կապիտալի արտադրողականության թեորիայի քննադատությունը), 1-ին հատ, գլ. 22, պարագինաֆ 2 (ժուժկալության թեորիայի քննադատությունը), 1-ին հատ, գլ. 7, պարագր. 3 (Սենիորի «վերջին ժամ» թեորիայի քննադատությունը):

## 6. Հավելյալ արժեքի թեորիայի նույնակությունը Մարքսի տնտեսական ուսմունքում

Եզրափակման մեջ անհրաժեշտ է ցույց տալ Մարքսի հավելյալ արժեքի թեորիայի գիտական և հեղափոխական հսկայական նշանակությունը, որը Լենինի արտահայտությամբ հանդիսանում է Մարքսի ամբողջ տնտեսական ուսմունքի անկյու-

նաքարը: Այդ հարցի վերաբերյալ հայեցածքը է արդում ուսումնասիրել հետեւյալ աշխատությունները.

Էնգելս.—«Կապիտալ»-ի Զ-րդ հատորի առաջաբանը.  
» «Սոցիալիզմի զարգացումը ուսուպիայից դեպի զիառություն».

Լենին.—«Մարքսիզմի երեք աղբյուրները և երեք բաղկացուցիչ մասերը», 18-րդ հատոր:  
» «Կարև Մարքս», 18-րդ հատոր:

## 7. Մարգր-մարդու կողմից սահագործելու լիկվիդացիան ՍՍՌՄ-ում

Բացահայտելով կապիտալիստական շահագործման էությունը, եզրակացության մեջ անհրաժեշտ է ընդգծել մեր սոցիալիստական տնտեսության սկզբունքային տարբերությունը հավիտալիստականի, ցուց տալով, որ Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ հեղափոխությունը, ի տարբերություն նախորդ աւլոր հեղափոխությունների, իր հետ չբերեց շահագործման մի ձեռնին անցում, այլ վերջնականապես լիկվիդացիայի նոթարկեց մարդը մարդու կողմից շահագործելու բոլոր ձեերը:

Այս հարցի առթիվ կարգալ հետեւյալ գրականությունը.  
Ծտալին.—«Ճառ՝ հարվածային կոլտնտեսականների համար միութենական ասածին համագումարում»,

» «Լենինիզմի հարցերը», էջ 662—677.  
» «Կենտրոնական կոմիտեի քաղաքական հաշվետվությունը Համբկ(μ)Պ 16-րդ համագումարին», «Լենինիզմի հարցերը», էջ 441—556.

» «ՍՍՌՄ Սահմանագրության նախագծի մասին», հատվ. 2-րդ.

«ՍՍՌՄ Սահմանագրությունը», 1-ին և 10-րդ գլուխները:

ՔԱՂԱՔԱՏՆԵՑԵՍՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆ

գ.թ. 3355, Մանկ. Բնադրական ապահովագույնություն, պատ. № 485, տիբաժ 720, 1940 թ.



БІБЛЮТЕКА  
Академії Науок  
УРСР

7915

33

5-81

ՀՀ Ազգային գրադարան



NL0061855